ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2023թ. հոկտեմբերի 11-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 26-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Գիտխորհրդի նոր կազմով առաջին նիստի անցկացման կապակցությամբ, խորհրդի նախագահ Կ.Խաչատրյանը հանդես եկավ շնորհավորական ուղերձով: Դեկան Կ.Խաչատրյանն իր խոսքում նշեց, որ գիտխորհրդի քարտուղարն ընտրվել է ֆակուլտետի կանոնակարգի համաձայն՝ դեկանը խորհրդի կազմից ընտրում է քարտուղարին և ներկայացնում ԵՊՀ ռեկտորի հաստատմանը, ներկայացրեց ֆակուլտետի արհբյուրոյի նորընտիր նախագահին՝ Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Գ.Մնացականյանին: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Մրցութային հանձնաժողովի ձևավորում (զեկ.՝ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կ.Խաչատրյան):
2. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ. Մրցութային հանձնաժողովի ձևավորում:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կ.Խաչատրյանը հանդես եկավ զեկույցով: Նախ ամփոփ ներկայացրեց մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակը՝ ստուգել բոլոր մրցույթների, սկսած գիտական կոչումներ հայցելուց մինչև ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալումը, մասնակիցների փաստաթղթերի համապատասխանությունը: Առաջարկեց ձևավորել հինգ անդամից բաղկացած մրցութային հանձնաժողով՝ յուրաքանչյուր ամբիոնից մեկ հոգի և ևս մեկը ուսանողներից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Առաջնորդվել հինգ անդամից բաղկացած մրցութային հանձնաժողովի ձևավավորմամբ և ընտրությունը կազմակերպել բաց քվեարկությամբ:

Մրցութային հանձնաժողովի անդամներն ընտրվեցին բաց քվեարկությամբ, միաձայն: Մրցութային հանձնաժողովը ձևավորվեց հետևյալ կազմով.

1) Առաքելյան Արամ Հմայակի (ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տեխ.գ.դ., պրոֆեսոր),
2) Մնացականյան Գրիգոր Մանվելի (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ, Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.),
3) Ալեքսանյան Վարդան Սամվելի (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գրասենյակի ղեկավար - դեկանի տեղակալ, Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.),
4) Հայրապետյան Գրիգոր Ռաֆայելի (ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.),
5) Մկրտչյան Գոհար Լևոնի (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի):

2. Ընթացիկ հարցեր

2.1 ԼՍԵՑԻՆ. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետից ԵՊՀ Գիտական խորհրդի անդամի ընտրության մասին:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կ.Խաչատրյանը ներկայացրեց, որ ֆակուլտետից ԵՊՀ Գիտական խորհրդի անդամ ընտրված տ.գ.թ., ասիստենտ Գ.Բարխուդարյանն իր դիմումի համաձայն ազատվել է այդ պաշտոնից: Դեկան Կ.Խաչատրյանը հավելեց, որ յուրաքանչյուր ֆակուլտետից ԵՊՀ Գիտական խորհրդի անդամ է դեկանը՝ ի պաշտոնե և ևս մեկ ընտրովի անդամ: Նշեց նաև, որ ֆակուլտետում ավանդաբար ռոտացիոն սկզբունքով պաշտոնավարել են ամբիոնի վարիչները, առաջարկեց շարունակել ձևավորված ավանդույթը և այս հարցում առաջնայնությունը տալ ամբիոնի վարիչներին: Դեկան Կ.Խաչատրյանը առաջարկեց

Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանի թեկնածությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. տ.գ.թ., դոցենտ Գ.Ասլանյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Եղոյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աբրահամյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը:

Այլ թեկնածություններ չեղան: Մատնանշվեց ներկայացված թեկնածուի ընտրության նպատակահարմարությունը և առաջարկվեց ընտրությունը կազմակերպել բաց քվեարկությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետից ԵՊՀ Գիտական խորհրդի անդամ ընտրել Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանին:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը ԵՊՀ Գիտական խորհրդի անդամ ընտրվեց բաց քվերկությամբ, միաձայն:

2.2 ԼՍԵՑԻՆ. 21T-5B193 ծածկագրով «Բուհ-կազմակերպություն համագործակցության զարգացման խնդիրները և լուծման ուղիները ՀՀ-ում» գիտական թեմայի (գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյան) 2022-23թթ. հաշվետվության մասին:

Գիտական թեմայի ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հանդես եկավ զեկուցմամբ: Տարեկան հաշվետվությամբ ամփոփ ներկայացրեց ՀՀ վեց պետական բուհերում ամբիոնի վարիչների և դեկանների անմիջական ներգրավվածությամբ իրականացված հարցման արդյունքները՝ մասնավոր հատվածի և ԲՈՒՀ-ի փոխհարաբերությունների, համագործակցության բնույթի բացահայտման համատեքստում: Հավելեց, որ ՀՀ վեց պետական բուհերում հետազոտություններն իրականացվել են նաև ֆոկուս խմբերով, հարցումներ են անցկացվել Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ) և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) ակտիվ համագործակցության շրջանակներում: Դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ 2022-2023թթ. ժամանակահատվածում իրականացված աշխատանքների արդյունքների մի մասի հիման վրա լույս է տեսել հոդված Scopus ինդեքսավորված միջազգային գիտական պարբերականում, իսկ արդյունքների մյուս մասի ամփոփմամբ նոր հոդվածի տպագրումը՝ կրկին Scopus ինդեքսավորված միջազգային գիտական պարբերականում, նախապատրաստական փուլում է: Գիտական թեմայի շրջանակում

աշխատանքները կատարվել են ըստ ժամանակացույցի՝ ներկայացված օրացույցային պլանի համաձայն: Առաջարկեց գնահատել կատարված աշխատանքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը:

Մատնանշվեց այն, որ հաշվետու ժամանակահատվածում թեմայի կատարման արդյունքների հիման վրա Scopus ինդեքսավորված միջազգային գիտական պարբերականում արդեն տպագրված է մեկ հոդված, իսկ երկրորդը՝ տպագրության նախապատրաստական փուլում է և նշվեց, որ այս փաստն առավել քան բավարար է թեմայի կատարումը դրական գնահատելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հավանություն տալ «Բուհ-կազմակերպություն համագործակցության զարգացման խնդիրները և լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի կատարման արդյունքներին և գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

Գիտական թեմայի կատարման արդյունքները գնահատվեցին դրական՝ միաձայն քվեարկությամբ:

2.3 ԼՍԵՑԻՆ. «Ֆինանսներ» մագիստրոսական ծրագրի 1 տարի տևողությամբ հաստատման հարցը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսահաշվային» ամբիոնի վարիչի պաշտոնակատար տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը նշեց, որ սեպտեմբերի 25-ին «Ֆինանսահաշվային» ամբիոնում կայացած նիստում քննարկվել է «Ֆինանսներ» մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանի վերանայման հարցը և ընդունվել է որոշում հաստատել 1 տարի տևողությամբ (60 կրեդիտանոց) «Ֆինանսներ» մագիստրոսական ծրագիրը: Որոշումը հիմնավորվեց հետևյալ փաստարկներով՝ առաջին տարին է, որ մագիստրոսական ծրագիրը չի կայացել և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման գծով, ԵՊՀ-ում գործում են շուրջ 10 մագիստրոսական ծրագրեր 1 տարի տևողությամբ: Տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը մատնանշեց, որ 1 տարի տևողությունը կբարձրացնի մագիստրոսական նոր ծրագրի գրավչությունը: Առաջարկեց տալ դրական եզրակացություն՝ լիցենզավորման գործընթացը մեկնարկելու համար, որպեսզի հունիսին կազմակերպվի առաջին ընդունելությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը, տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը, տ.գ.դ., պրոֆեսոր

Մ.Միքայելյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Ասլանյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը, տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը:

Հնչեցին տարբեր տեսակետներ մագիստրոսական ծրագրերի արդյունավետության, գրավչության հետ կապված: Որպես փաստարկներ ներկայացվեցին՝ վարձավճարը, տևողությունը, բակալավրիատի և մագիստրոսական ծրագրերում հնարավոր կրկնությունների բացառումը, դիմորդների որոշ մասի տնտեսագիտության և կառավարման մասնագիտությամբ բակալավրի որակավորման աստիճան չունենալու հանգամանքը: Կարևորվեց այն, որ 2 տարի տևողությամբ մագիստրոսական ծրագրի ժամկետի կրճատումը՝ մինչև 1.5 կամ 1 տարի, պահանջում է ծրագրի վերջնարդյունքների որոշակիացում, ընդգծվեց նաև, որ մագիստրոսական բոլոր ծրագրերի ղեկավարները պետք է հաշվետվություն ներկայացնեն:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հարգել ամբիոնի որոշումը և ծրագրի գրավչությունը բարձրացնելու նպատակով կրճատել ծրագրի տևողությունը:

1 տարի տևողությամբ «Ֆինանսներ» մագիստրոսական ծրագիրը հաստատվեց քվեարկությամբ՝ 25 կողմ, 1 ձեռնպահ:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ *Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*